ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 54-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 10.1-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիմքով մերժելու վերաբերյալ զեկուցողի՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ա. Գյուլումյանի առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած դիմումում խնդրել է որոշել ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 71, 72 և 75-րդ հոդվածներին և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 63 և 162-րդ հոդվածներին համապատասխանության հարցերը:

2. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականության հարցի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի որոշում (2013թ. ապրիլի 23-ի ՍԴՈ-1082): Սահմանադրական դատարանի նշված որոշումից հետո ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածը լրացվել և փոփոխվել է 01.03.2017թ. ՀՕ-59-Ն օրենքով, սակայն վիճարկվող 5-րդ մասը չի փոփոխվել:

3. Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետի սահմանադրականության հարցին, ապա դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողը բարձրացնում է օրենսդրական բացի խնդիր: Դիմողի համոզմամբ՝ վիճարկվող դրույթում «...հանրային աշխատանքներ պատժատեսակը ազատազրկում պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումները ... չնախատեսելն ինքնին առաջ է բերում հիմնավոր կասկած սահմանադրաիրավական նորմերի և ստեղծված իրավիճակի նկատմամբ կիրառելի իրավական կարգավորումների միջև հակասության առումով»:

2010թ. սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-914 որոշմամբ սահմանադրական դատարանը գտել է, որ՝ «Օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՞ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2010թ. փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է «Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմատիվ պատվիրանի բացակայությամբ,** ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Վերաքննիչ քրեական դատարանի՝ գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշումից հետևում է, որ հարցի վերաբերյալ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկա, համաձայն որի՝ հանրային աշխատանքներ պատժատեսակն ազատազրկում պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ դատարանի որոշումները, որոնք ընդգրկված չեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետում, ևս հանդիսանում է գործն ըստ էության լուծող դատական ակտ և, հետևաբար, դրանց դեմ բերված վերաքննիչ բողոքները ենթակա են քննության՝ կոլեգիալ կազմով: Նման մեկնաբանությամբ նորմի կիրառումը չի կարող խախտել կոնկրետ սահմանադրական իրավունքը, հետևաբար՝ օրենքի նման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ Սահմանադրական դատարանին:

Ելնելով վերոնշյալ հիմնավորումներից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննության ընդունումն ամբողջությամբ մերժել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

3 սեպտեմբերի 2018 թվականի
ՍԴԱՈ-61